ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

N Ե 516/21
18 մայիսի 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ ուղարկվում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի թիվ 4 հերթական նիստի NN 25-32 որոշումները՝ հավելվածների հետ մեկտեղ:

Առդիր՝ 5 (հինգ) էլեկտրոնային փաթեթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Հ. ԵՂՅԱՆ

Կատ.՝ Լ. Ավուշյան
հեռ. (0222) 65203

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 14-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝

1.Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 19-ի N 12-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի N 34-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և նախագծման թույլտվություն տալու մասին:

5.Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7.Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 26-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ
2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ
4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 19-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող Վ. Սարգսյան փողոցի 15/39 հասցեի հողամասը առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով, «Պրես-Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու թույլտվություն տալու մասին» N 12-Ա որոշման 2-րդ կետում «5 (հինգ) տարի» բառերը փոխարինել «մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով, իսկ «9000 (ինը հազար)» բառերը փոխարինել «30000 (երեսուն հազար)» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 12-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Ջորավար Անդրանիկի փողոցի 46/40 հասցեի հողամասը առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու թույլտվություն տալու մասին» N 34-Ա որոշման 2-րդ կետում «5 (հինգ) տարի» բառերը փոխարինել «մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով, իսկ «9000 (ինը հազար)» բառերը փոխարինել «30000 (երեսուն հազար)» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 29-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Մնացական Գագիկի Գևորգյանի հայտը՝ ***ավագանին որոշում է.***

1.Մնացական Գագիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0214-0019 ծածկագրով (վկայական N 22042021-07-0067) 0.09 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության շինություն կառուցելու նպատակով:

2.Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի 07-051-0214-0019 ծածկագրով (վկայական N22042021-07-0067) 0.09 հեկտար

մակերեսով հողամասում պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության շինություն կառուցելու նպատակով օրենքով սահմանված կարգով Մնացական Գագիկի Գևորգյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք).

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 30-Ն

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի՝ *ավագանին որոշում է.*

1.Սահմանել Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «145-01/Վ-021», «146-01/Վ-021», «147-01/Վ-021», «148-01/Վ-021» և «149-01/Վ-021» գրություններն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» N 59-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 32-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «144-01/Վ-021», ապրիլի 21-ի «151-01/Վ-021», «151Ա-01/Վ-021», «151Բ-01/Վ-021», «151Գ-01/Վ-021», ապրիլի 22-ի «150-02/Վ-021» և ապրիլի 30-ի «175-01/Վ-021» ու «175Ա-01/Վ-021» գրությունները ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 2/84 հասցեի 82.9 քմ ընդհանուր մակերեսով տնտեսական շինությունն ու ավտոտնակը և դրանց զբաղեցրած 145.32 քմ մակերեսով հողամասը (վկայական N 2711164, տրված 2010 թվականի օգոստոսի 11-ին, կադաստրային համարը՝ 07-003-0025-0094, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման), Օղակաձև փողոց 50 շենքի 17.41 քմ մակերեսով 1 բնակարանը (վկայական N03112017-07-0139), 22.12 քմ

մակերեսով 90 բնակարանը (վկայական N 03112017-07-0104), 16.62 քմ մակերեսով 80 բնակարանը (վկայական N 03112017-07-0119), 14.01 քմ մակերեսով 65 բնակարանը (վկայական N 17032017-07-0063) և 16.5 քմ մակերեսով 69 բնակարանը (վկայական N 03112017-07-0056), 2-րդ փողոց 49 շենքի 13.29 քմ մակերեսով 35 բնակարանն (վկայական N 01042014-07-0016) ու «ՊՏ-165 Մ» մակնիշի խոտհավաքիչ մամլիչը օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ
2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ
4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ
5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ

Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 14 - ի N 30-Ն որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետ՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

ԳԼՈՒԽ 2.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 250 մետր, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 200 մետր հեռավորության վրա՝ բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

ա. գերեզմանատներին կից՝ գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև
50 մետր հեռավորության վրա, կամ

բ. միայն անհատական բնակելի տներից և (կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

3. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով.

բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ.

գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք).

դ. սանհանգույց (առնվազն 2 հատ, որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար).

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ.

զ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք.

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է մատչելի լինեն տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար.

3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահներում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույցներ.

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահների ճակատային մասում պետք է տեղադրված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, որոնք երեկոյան ժամերին պետք է լուսավորված լինեն.

5) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր:

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագույրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Հ. ԵՂՅԱՆ

Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 14 - ի N 32 - Ա որոշման

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ

Հ/Հ	Գույքի անվանումը	Գույքի հասցեն	Գույքի մակերեսը (քմ)	Գույքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ)
1.	Հողամաս, տնտեսական շինություն և ավտոտնակ	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 2/84	Հողամաս՝ 145.32 տնտեսական շինություն և ավտոտնակ՝ 82.9	1.127.000, որից հողամասի կադաստրային արժեքը՝ 644.061
2.	բնակարան	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 1 բնակարան	17.41	690.000
3.	բնակարան	Կոտայքի մարզ, քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 90 բնակարան	22.12	817.000
4.	բնակարան	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 80 բնակարան	16.62	690.000
5.	բնակարան	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 65 բնակարան	14.01	230.000
6.	բնակարան	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 50 շենք 69 բնակարան	16.5	686.000
7.	բնակարան	Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան 2-րդ փողոց 49 շենք 35 բնակարան	13.29	684.000

8.	խոտհավաքիչ մամլիչ «ՊՏ-165 Մ» մակնիշի	-	-	1.800.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ